ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1241-Ա

17 օգոստոսի 2026 թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՊԵՏՐՈՋԱՎՈԴՍԿԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 45/1 ԵՎ ԾՈՎԱԿԱԼ ԻՍԱԿՈՎԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 36/2 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ծ. Իսակովի փողոցի թիվ 36Ա տան բնակիչ Արայիկ Լենդրուշի Սամսոնյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Պետրոզավոդսկի փողոցի թիվ 45/1 և Ծովակալ Իսակովի փողոցի թիվ 36/2 հասցեներում գտնվող անշարժ գույքերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 11062025-04-0051 տրված՝ 11.06.2025թ., թիվ 29072026-04-0150 տրված՝ 29.07.2026թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011PFM2AYE/ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ծովակալ Իսակովի փողոց, թիվ 36/2 շինություն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT

Ստորագրված է
17 օգոստոսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1242-Ա

17 օգոստոսի 2026թ. ք.Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ Լ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 78 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Շահումյան բնակավայրի Լ.Նավասարդյան փողոցի թիվ 78 տան բնակիչ Պետրոս Ռուբենի Հունանյանի դիմումը իրեն, Օֆիկ Գևորգի Հունանյանին, Ռուբեն Պետրոսի Հունանյանին, Ռուդիկ Պետրոսի Հունանյանին և Սիրանուշ Պետրոսի Հունանյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 11092025-04-0010 տրված 11.09.2025թ., «Ավագ Ավագյան Գագիկի» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 20.07.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 041723PCBX5Y, 04172KBCQUMS /.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Շահումյան բնակավայրի Լ.Նավասարդյան փողոցի թիվ 78 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Շահումյան բնակավայր,Լ.Նավասարդյան փողոց, թիվ 78/1 շինություն,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Շահումյան բնակավայր,Լ.Նավասարդյան փողոց, թիվ 78 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МУНИЦИПАЛИТЕТ ВАГАРШАПАТСКОЙ ОБЩИНЫ
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT COMMUNITY

Ստորագրված է
17 օգոստոսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1243Ա

17 օգոստոսի 2026 թ.

ք. Էջմիածին

ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ (ՏՆՕՐԻՆԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 2-րդ մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Դաշտ բնակավայրի Մ. Մաշտոց փողոց թիվ 14 տան հասցեի բնակիչ՝ Մեսրոպ Գրիգորի Մարտիրոսյանիդիմումը և Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 22.07.2026թ. թիվ 10 նիստի թիվ 3 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլատրել՝ անչափահաս Մոնիկա Մեսրոպի Մարտիրոսյանի՝ /ծնված՝ 31.01.2010թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 047748/ օրինական ներկայացուցիչ Մեսրոպ Գրիգորի Մարտիրոսյանին /ծնված՝ 26.11.1980թ., անձնագիր՝AT 0445584/ օտարելու (տնօրինելու) անչափահաս Մոնիկա Մեսրոպի Մարտիրոսյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Երևան քաղաք, Կենտրոն, Տիգրան Մեծի պողոտա թիվ 39 շենքի թիվ 57 բն. հասցեի անշարժ գույքի 1/20 բաժնեմասը (սեփականության վկայական՝ 13022026-01-0239):

2. Հսկողություն սահմանել Մոնիկա Մեսրոպի Մարտիրոսյանի ծնող Մեսրոպ Գրիգորի Մարտիրոսյանի գործունեության նկատմամբ:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1244-Ա

18 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՐԳԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 7/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Խորենացու փողոցի 2-րդ շենքի թիվ 54 բնակարանի բնակիչ Էդուվարդ Սարգսի Հակոբյանի դիմումը իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 20022025-04-0063 տրված՝ 20.02.2025թ., «Արիդա Գևորգի Բաղրամյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0393/ կողմից 30.07.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04162EZTXS99, 04162WFFTRPD/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Մրգաստան գյուղի 3-րդ փողոցի թիվ 7/1 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Մրգաստան գյուղ, 3-րդ փողոց, թիվ 7/2 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Մրգաստան գյուղ, 3-րդ փողոց, թիվ 7/1 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Ստորագրված է
18 Օգոստոսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1245-Ա

18 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 3-րդ գլխի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 30.10.2025թ. թիվ 27-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով 18.08.2026թ.-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն սույն որոշման թիվ 1, թիվ 2, թիվ 3, թիվ 4 և թիվ 5 հավելվածների:

2. Սահմանել, որ համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթը անցկացվում է ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

2026-08-18 14:14:50 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1246-Ա

18 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՐԳԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ 14-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա. Պուշկինի փողոցի թիվ 1 տան բնակիչ Պավլուշ Արամայիսի Բրուդյանի դիմումը իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 25022021-04-0029 տրված՝ 25.02.2021թ., «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 17.07.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04162KXPJEJY, 04162HVJ5GWF/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Մրգաստան գյուղի 14-րդ փողոցի թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Մրգաստան գյուղ, 14-րդ փողոց, թիվ 14 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Մրգաստան գյուղ, 14-րդ փողոց, թիվ 14/1 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Ստորագրված է
18 Օգոստոսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1247-Ա

18 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ 04-002-1012-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սասունցի Դավթի թաղամասի թիվ 18 շենքի թիվ 6 բնակարանի բնակիչ Շուշան Արթուրի Բադալյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի 04-002-1012-0005 կադաստրային ծածկագրով հողամասի հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 12.03.2026թ. կնքված թիվ 2658,2659,2660 և 2661 գրանցամատյաններով գրանցված ըստ օրենքի ժառանգության վկայագրեր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011ABPUPAU/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Սասունցի Դավթի թաղամասի 1-ին փողոց, թիվ 36 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT REPUBLIC OF ARMENIA

Ստորագրված է
18 Օգոստոսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1248-Ա

18 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 17.04.2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 608Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 04.06.2026թ. թիվ Կ-04062026-04-0241 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 04.06.2026 թվականի «Վաղարշապատ համայնքի Գեղակերտ գյուղի Վ.Մամիկոնյան փողոցի թիվ 22 հասցեում ինքնակամ կառուցված բնակելի տունը և ինքնակամ բացված դուռը օրինականացնելու մասին» թիվ 608Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ հանել նախաբանում նշված «Սևակ Լիպարիտի Հարությունյանին» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ * ՊՐԱՎԱՐԱՆ * 04463138 * REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT

Ստորագրված է
18 Օգոստոսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1249-Ա

18 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.173 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Ջիվան Արսենի Հարությունյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0390/ կողմից 27.07.2026թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04172ՄՄՀՇՄ3Ե.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող Շահումյան գյուղի Մ. Հերացու փողոցում գտնվող 0.173հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Շահումյան գյուղ, Մ. Հերացու փողոց թիվ 2/1 :

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Ստորագրված է
18 Օգոստոսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1250-Ա

18 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ԱՍՏՂԻԿ ԼԵՎՈՆԻ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աստղիկ Լևոնի Այվազյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան սեփականության իրավունքով իրեն պատկանող /հիմք՝ 24.10.2023թ. տրված թիվ 05052026-04-0056 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական և «Ավագ Ավագյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 17.04.2026թ. կազմված հատակագիծ, / Վաղարշապատ համայնքի «Վաղարշապատ» ԳԿՏ տարածքում գտնվող 0.3472հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության /խաղող/ հողամասից 0.0461հա մակերեսով մասի նպատակային նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման փոփոխելու խնդրանքով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 8-րդ մասի, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի «Վաղարշապատ» ԳԿՏ տարածքում գտնվող 0.3472հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության /խաղող/ հողամասից 0.0461հա մակերեսով մասի նպատակային և գործառնական նշանակությունը համապատասխանեցնել ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր 8 և Արմավիր 6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի և Ոսկեհատ գյուղի գլխավոր հատակագծերի նախագծերը /գոտևորման նախագծերը/ հաստատելու մասին ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 26.04.2022թ. առաջին նստաշրջանի արտահերթ առաջին նիստի թիվ 80 որոշման, Արմավիրի մարզպետի 19.05.2022թ. թիվ ՄՈ/344-2022 որոշման պահանջներին և համարել

փոփոխված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի:

2.Համաձայն տարածագնահատման գոտիականության հողամասը գտնվում է 11-րդ գոտում և կադաստրային արժեքը մեկ քառակուսի մետրի համար կազմում է 4441.8 /չորս հազար չորս հարյուր քառասունմեկ ամբողջ ութ/ ՀՀ դրամ, փոփոխման պահին հողամասի կադաստրային արժեքների տարբերությունը մեկ քառակուսի մետրի համար 3948.55 /երեք հազար ինը հարյուր քառասունութ ամբողջ հիսունհինգ/ ՀՀ դրամ է և 0.0461հա համար կազմում է 1 820 282 / մեկ միլիոն ութ հարյուր քսան հազար երկու հարյուր ութսուներկու/ ՀՀ դրամ, որը պետք է վճարել համայնքային բյուջե՝ 900325151166 հաշվեհամարին:

3.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԿԱՊԱՐԵՏԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МУНИЦИПАЛИТЕТ ВАГАРШАПАТА
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
04463138

Ստորագրված է
18 Օգոստոսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1251-Ա

19 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ /ՆԱԽԿԻՆ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ /ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 32Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Էջմիածին քաղաքի Ավետիսյան փողոցի 1-ին փակուղի թիվ 2 տան բնակիչ Անդրանիկ Ռազմիկի Զաքարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հ. Շիրազի /նախկին Պիոներական/ փողոցի թիվ 32ա հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 015531 տրված՝ 21.07.1998թ., և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011FPTLMH9 / տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք.Էջմիածին, Հ. Շիրազի փողոց, թիվ 32/3 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
19 Օգոստոսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1252-Ա

19 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԱՌՆԻԿ ՎԻԴՈԿԻ ՄԵՍՐՈՊՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն, Զաքարիա Քանաքեռցու փ.129, Շ 70 ԲՆ. բնակիչ՝ Գառնիկ Վիդոկի Մեսրոպյանի դիմումը պարզվեց, որ /հիմք՝ <<Արմավիրի մարզ>> Նոտարական տարածքի նոտար՝ Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 23.12.2024 թ. հաստատված 10288 սեղանամատյանով ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 15.06.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04042M4RFNL7/ Վաղարշապատ համայնքի Այգեշատ բնակավայրի Արարատյան փողոցի թիվ 12 հասցեում գտնվող 0.1182 հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գտնվող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ: Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Այգեշատ բնակավայրի Արարատյան փողոցի թիվ 12 հասցեում գտնվող 0.1182 հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող

բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները համարել Գառնիկ Վիդոկի Մեսրոպյանի /ծնված՝ 25.11.1968թ./ սեփականությունը:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ * 04463138 * РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МУНИЦИПАЛИТЕТ ВАГАРШАПАТА * REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1253-Ա

19 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ 04-002-0204-0020 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Երևան քաղաքի Աջափնյակ,Քըրք Քըրքորյան փողոցի թիվ 14 շենքի թիվ 16 բնակարանի բնակիչ Ալբերտ Հովհաննեսի Ավետիսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի 04-002-0204-0020 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22092025-04-0053 տրված՝ 22.09.2025թ. կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 040119A2WGFM/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Երևան-Արմավիր մայրուղի, 20-21 կմ, թիվ 23 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Ստորագրված է
19 օգոստոսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1254Ա

19 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 31.04.2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 486Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 31.03.2026թ «Գյուլխանում Մկրտչի Սաֆարյանի նկատմամբ պատրոնաժ սահմանելու մասին» թիվ 486 Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման նախաբանում և 1-ին կետում նշված «թիվ 33 տան» բառերը փոփոխել «թիվ 17 տան» բառերով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում Անժելա Արմենակի Հախնազարյանին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ * 04463138 * ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ * REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT * РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МУНИЦИПАЛИТЕТ ВАГАРШАПАТА * ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1255-Ա

19 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 21.10.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1148Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 02.06.2026թ. թիվ Կ-16042026-04-0280 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 21.10.2025 թվականի «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տունը և ավել օգտագործվող հողամասը Էդվարդ Հրաչի Նավասարդյանի սեփականությունը համարելու և ինքնակամ կառուցված բնակելի տունը և պարիսպը օրինականացնելու մասին» թիվ 1148Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման նախաբանում նշված «16.07.2023թ. կազմված հատակագիծ» բառերը փոփոխել «10.06.2026թ. կազմված հատակագիծ» բառերով:

2) որոշման նախաբանում և եզրափակիչ մասում նշված «0.0206հա» բառերը փոփոխել «0.0106հա» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
19 Օգոստոսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1256-Ա

19 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԳԱԲՐԻԵԼ ՄԵԼՔՈՆԻ ԵՐԻՑՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Կոմիտաս փողոցի 1 տան բնակիչ՝ Գաբրիել Մելքոնի Երիցյանի դիմումը պարզվել է, որ համաձայն 10.09.1985թ. տրված տեխնիկական անձնագիր, «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար՝ Սամվել Ղարիբյանի կողմից 24.12.2025թ. հաստատված թիվ 11482 և 11483 սեղանամատյաններով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի, «Հռիփսիմե Կիրակոսի Արսենյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0503/ կողմից 09.04.2026թ. կազմված հատակագծի, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Կոմիտաս 1 հասցեում գտնվող 0.1182 հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գտնվող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

. Բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0.1 հա, որի վրա կառուցված է բնակելի տուն և բնակելի նշանակության օժանդակ շինություններ, իսկ

. բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0.0182 հա սահմանազատված հողամաս:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Կոմիտաս փողոցի 1 հասցեում գտնվող 0.1182 հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 0.0182 հա մակերեսով հողամասը համարել Գաբրիել Մելքոնի Երիցյանի /ծնված՝ 03.03.1964թ./ սեփականությունը:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
19 Օգոստոսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1257-Ա

19 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՌՆԻԿԻ ՉԱԽՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ռ. Եսայան փողոցի թիվ 11 հասցեի բնակիչ՝ Հովհաննես Գառնիկի Չախոյանի դիմումը պարզվել է,որ

. համաձայն տեխնիկական անձնագրի, Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար՝ Ալեք Ավետյանի կողմից 06.02.2012թ. հաստատված թիվ 541 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի, «Հռիփսիմե Կիրակոսի Արսենյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0503/ կողմից 20.03.2026թ. կազմված հատակագծի և Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագրի՝ 2026LVNRQ2, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ռ. Եսայան փողոցի թիվ 11 հասցեի բնակելի տան իրավատերն է Հովհաննես Գառնիկի Չախոյանը.

. բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0.0730 հա, որի վրա կառուցված է բնակելի տուն, և բնակելի նշանակության օժանդակ շինություններ:

. բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0.0085 հա սահմանազատված հողամաս, որի վրա կառուցված է բնակելի նշանակության օժանդակ շինություն:

. բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և ավել օգտագործվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում կառուցված բնակելի տունը, որի նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի

ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ռ. Եսայան փողոցի թիվ 11 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար 0.0730 հա օրինական և դրան կից 0.0085 հա ավել օգտագործվող հողամասը, ինչպես նաև բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, բնակելի նշանակության օժանդակ շինությունները համարել Հովհաննես Գառնիկի Չախոյանի /ծնված՝ 03.07.1960թ./ սեփականությունը:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
19 Օգոստոսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1258-Ա

19 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ռ. ԵՍԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 11 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԱՍԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ռ. Եսայան փողոցի թիվ 11 տան բնակիչ Հովհաննես Գառնիկի Չախոյանի դիմումը՝ պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող տեխնիկական անձնագրի, Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար՝ Ալեք Ավետյանի կողմից 06.02.2012թ. հաստատված թիվ 541 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի, «Հռիփսիմե Կիրակոսի Արսենյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0503/ կողմից 20.03.2026թ. կազմված հատակագծի, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2026LVNRQ2/ Վաղարշապատ համայնքի Ռ. Եսայան փողոցի թիվ 11 հասցեում գտնվող 0.0815 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 199.2 քմ մակերեսով բնակելի նշանակության շինությունները օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու» մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ռ. Եսայան փողոցի թիվ 11 հասցեում գտնվող 0.0815 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 199.2 քմ մակերեսով բնակելի նշանակության շինությունները ճանաչել օրինական, որի համար սահմանված 392225 /երեք հարյուր իննսուներկու հազար երկու հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ * 04463138 * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ * РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МУНИЦИПАЛИТЕТ ВАГАРШАПАТ * REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT

Ստորագրված է
19 Օգոստոսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1259-Ա

19 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԳՅՈՒՂԻ ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 36 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԱՍԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Մաշտոցի փողոցի թիվ 36 տան բնակիչ Ալբերտ Ջումայի Մինասյանի դիմումը՝ պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝ թիվ 13022017-04-0007 սեփականության իրավունքի վկայականի, «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 19.06.2026թ. կազմված հատակագիծ, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2026YVU47Y/ Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Մաշտոցի փողոցի թիվ 36 հասցեում գտնվող 0.04 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 229.2 քմ /արտաքին 229.2 քմ, ներքին 206.1 քմ/ մակերեսով բնակելի նշանակության շինությունները օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու» մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Մաշտոցի փողոցի թիվ 36 հասցեում գտնվող 0.04 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի

կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 229.2 քմ /արտաքին 229.2 քմ, ներքին 206.1 քմ/ մակերեսով բնակելի նշանակության շինությունները ճանաչել օրինական, որի համար սահմանված 277103 /երկու հարյուր յոթանասունյոթ հազար հարյուր երեք/ ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
19 Օգոստոսի 2026 թվականին
ք.Էջմիածին